# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն

**Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանների միջև գտնվող Սադախլո-Բագրատաշեն անցման կետի տարածքում՝ Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցման նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի**

25.08.2020թ.

***<u>Հանձնաժողովի անդամներ</u>***

*Հանձնաժողովի նախագահ՝*

| | |
|---|---|
| Արմեն Ղուլարյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող |

*Անդամներ՝*

| | |
|---|---|
| Հ. Դավթյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ |
| Ա. Հովսեփյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության գիտատեխնիկական քաղաքականության բաժնի պետ պետ |
| Դ. Սողոմոնյան | ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ |
| Վ. Վարդանյան | ՀՀ պաշտպանության նախարարության ԿՇ և ԱԲ վարչության նախագծա-նախահաշվային բաժնի պետ |
| Հ. Հարությունյան | ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ զինված ուժերի ինժեներական զորքերի վարչության պետի տեղակալ, գնդապետ |
| Գ. Վարդանյան | ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի սահմանային ծառայության կազմակերպման բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ |
| Ռ. Գրիգորյան | ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ |
| Մ. Ասլանյան | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տեխնիկական անվտանգության փորձագիտական լաբորատորիայի պետ |

| | |
|---|---|
| Հ. Մկրտչյան | ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր մասնագետ |
| Ա. Սանոյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ճանապարհային ենթակառուցվածքների առաջատար ինժեներ |
| Հ. Հովսեփյան | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության հուշարձանների վերականգնման բաժնի գլխավոր մասնագետ |
| Ա. Հովհաննիսյան | ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, ոստիկանության ավագ լեյտենանտ |

*Հանձնաժողովի քարտուղար՝*

| | |
|---|---|
| Հ. Հարությունյան | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ճարտարապետության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար) |

***Օրակարգ՝***

**Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանների միջև գտնվող Սադախլո-Բագրատաշեն անցման կետի տարածքում՝ Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցման նախագծային փաստաթղթերի քննարկում**

Հայաստանում Հանրապետությունում կորոնավիրուսի (COVID-19) տարածումը կանխարգելող միջոցառումների շրջանակում Հանձնաժողովի նիստն անցկացվեց հեռավար կարգով՝ նախագծային փաստաթղթերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացությունների հիման վրա: Եզրակացությունները և եզրակացությունների ամփոփ-տեղեկանքը կցվում են սույն արձանագրությանը:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացվել է հետևյալ առաջարկությունը. «նախագծի սեյսմիկ հաշվարկի բաժնում ներառվել է World Health Organization կողմից տրամադրված ՀՀ սեյսմիկ վտանգի գոտևորման քարտեզը, սակայն 2018թ., Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, Միջազգային կոնսորցիումի կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի հավանական գոտևորման նոր քարտեզ, համաձայն որի Բագրատաշեն տարածքի գրունտի առավելագույն արագացման արժեքը ընդունվել է 0.3g:»

Այլ դիտողություններ և առաջարկություններ չեն արձանագրվել:

Հաշվի առնելով քննարկման արդյունքները՝ Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանների միջև գտնվող Սադախլո-Բագրատաշեն

անցման կետի տարածքում՝ Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ տալ դրական եզրակացություն:

*Հանձնաժողովի նախագահ՝* *Ա. Ղուլարյան*

*Քարտուղար՝* *Հ. Հարությունյան*